

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքի խոսքը՝ Ուսանողների միջազգային օրվա առթիվ

17.11.2023

Մի րեւի ուսանողներ՝

Այսօր համաշխարհային տոնացույցում նշվում է Ուսանողության միջազգային օրը, ինչը հիանալի առիթ է՝ գնահատելու եւ արժեւորելու ձեր դերն ու ձեռքբերումները հանրային կյանքում, հայրենաշինության ապագա ծրագրերում:

Ձեզանից յուրաքանչյուրը բարձրագույն կրթության է ձգտել՝ նախելառաջ մեր հայրենիքի ու հանրության համար պիտանի մարդ լինելու, հոգեւոր ու նյութական արժեքներ կերտելու եւ սերունդներին թողնելու համար, որը եւ կարելի է համարել չափազանց կարեւոր առաքելություն:

Ձեր շարքերում են մեր ապագայի կիրթ ու հմուտ բժիշկները, մանկավարժները, տնտեսագետները, սպաները, գյուղատնտեսները, զինակազմները, արվեստագետները, պետական ու քաղաքական գործիչները, որոնց կարիքը միշտ ու անչափ ունի մեր հայրենի երկիրը:

Գլուխ ենք խոնարհում այն ուսանողների սուրբ հիշատակի առջեւ, ովքեր իրենց կյանքը զոհեցին հայրենիքի համար մղվող գոյամարտերում: Նաեւ հպարտանում ենք այն ուսանողներով, ովքեր վերադարձան հերոսամարտերից, այն ուսանողներով, ովքեր այժմ զինվորագրված են հայրենիքի պաշտպանությանը եւ անառիկ են պահում մեր սահմանները:

Ձեր երազանքները նվիրական են, հուսադրող լի ամենաազնիվ մղումներով, որոնք, վստահ եմ, անպայման կյանքի կկոչվեն՝ Հայաստան երկիրը դարձնելով ավելի հզոր, անպարտ:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ուսանողության միջազգային օրվա առիթով, մաղթում անսպառ հաջողություններ ուսման մեջ ու անձնական կյանքում:

Լավագույն ցանկություններով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան